ք. Երևան « » 2021 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N ____Լ

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 102-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետի, 21-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 749-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 13-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կադաստրի կոմիտեի 2021 թվականի մայիսի 22-ի «Կադաստրի կոմիտեի գրանցման, գեոդեզիայի և հողաշինարարության, ներքին վերահսկողության, գրասենյակների համակարգման, իրավաբանական, կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության, արտաքին կապերի, անձնակազմի կառավարման վարչությունների, քարտուղարության, հանրային կապերի, զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժինների, Գեոմատիկայի կենտրոնի կանոնադրությունները հաստատելու և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2012 թվականի մարտի 5-ի N 57-Լ հրամանում փոփոխություններ կատարելու, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2015 թվականի հունիսի 10-ի N 15-Լ, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 2016 թվականի ապրիլի 25-ի N 92-Լ, 2018 թվականի հոկտեմբերի 17-ի N 229-Լ, հոկտեմբերի 19-ի N 232-Լ հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 102-Լ հրամանով հաստատված N 1 հավելվածով սահմանված կոմիտեի գույքի գրանցման վարչության կառուցվածքում կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունը՝

1) դադարեցնել կոմիտեի գույքի գրանցման վարչության դիմում-բողոքների քննարկման բաժնի գործունեությունը.

2) այդ կապակցությամբ՝

ա. ուժը կորցրած ճանաչել 15-րդ կետի 3-րդ ենթակետը.

բ. ուժը կորցրած ճանաչել 26-29-րդ կետերը:

2. Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողին՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը ներկայացնել առաջարկություն Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Կադաստրի կոմիտեի անվանացանկը հաստատելու մասին» N 16-Լ հրամանով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան

Signed by: TOVMASYAN SUREN 1201860393